



ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ՄԻՐՈՎ
ՍՏԵՂԾԵՑ ԶԻՍ

6 ՏԱՐԵԿԱՆ, Ա. ՄԱՍ

Աստուած շատ գեղեցիկ աշխարհ մը
ստեղծեց, որպէսզի մենք վայելենք: Երկիրը, ծովը,
գետերը, արեւը, լուսինը եւ աստղերը, մեծ ու պզտիկ
կենդանիները, եւ համեղ ուտելիքները բոլոր,
Աստուած մեզի տուած է:





Սիրելի ծնողներ

Մանուկները այս աշխարհով կ'ուրախանան, եւ վայելել կ'ուզեն Աստուծոյ ստեղծագործութիւնը: Այս դասը մանուկներուն մէջ կը զարգացնէ ստեղծագործութեան նկատմամբ անոնց ունեցած հետաքրքրութիւնը, ստեղծագործութեան պատմութեան ընդմէջէն:

Աւետարանէն եւ սաղմոսներէն քաղուած յատուկ հատուածներով, աշակերտները պիտի սորվին թէ արեւը, լուսինը, աստղերը, ջուրը եւ աշխարհի մէջ գտնուող ամէն բան Աստուած ստեղծած է մեր վայելքին համար:

ԱՄՏՈՒԱԾ ԿԸ ՍՏԵՂԾԷ ԱՇԽԱՐՀԸ

Աստուած իր ստեղծածները տեսաւ, ամենքը բարի էին:

Ըստ Ծննդոց 1.31

Գրէ՛ր...

Այս նկարներուն նայէ՛: Ասոնցմէ ոմանք բնութեան մէջ կը տեսնես, որովհետեւ անոնք ստեղծուած են: Ոմանք մարդոց կողմէ շինուած են: Տոյց տո՛ւր ստեղծուածները, այսինքն անոնք որոնք մարդիկ չեն կրնար շինել: Անոնց շուրջը կլոր մը գծէ՛: Ապա ցոյց տո՛ւր մարդոց կողմէ շինուածները, եւ քառակուսի մը գծէ՛ անոնց շուրջը:



Կլորի մէջ առածներէդ որո՞նք ամէնէն աւելի կը սիրես: Անոնց քով նշան մը դիր: Հիմա ուսուցիչիդ տուած թուղթին վրայ գծէ՛ եւ ներկէ՛ այն որ շատ կը սիրես:

Գիտե՞ս թէ այս բնութիւնը ո՞վ ստեղծած է:

Ուսուցիչիդ պատմելիք պատմութիւնը լաւ մտիկ ըրէ՛, որպէսզի գիտնաս պատասխանը:



ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՁԷՆ

Աստուած ԿՐ ԱՏԵՂԾԷ ԱՇԽԱՐՀՈՒ

Հստ Ծստոճ 1, 2.4-9

Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Աստուած ըսաւ «Լոյս թող ըլլայ»:

Իրիկուն եւ առտու ըլլալով, առաջին օրը եղաւ:



Աստուած վերի տարածութիւնը ստեղծեց եւ զայն երկինք կոչեց:

Իրիկուն եւ առտու ըլլալով, երկրորդ օրը եղաւ:


Աստուած ցամաքը եւ ծովը ստեղծեց եւ ամեն տեսակի բոյսերն ու ծառերը: Աստուած տեսաւ որ ամենքն ալ լաւ են ու բարի:

Իրիկուն եւ առտու ըլլալով, երրորդ օրը եղաւ:



Աստուած ստեղծեց արեւը, լուսինը
ու աստղերը, որպէսզի լուսաւորեն
երկիրը: Աստուած տեսաւ որ ասոնք
ալ լաւ են ու բարի:

Իրիկուն եւ առտու ըլլալով, չորրորդ
օրը եղաւ:




Աստուած ստեղծեց ծովուն մէջ
գտնուող ամէն կենդանիները, ինչպէս
նաեւ երկինքի բոլոր թռչունները:
Աստուած տեսաւ որ անոնք լաւ են ու
բարի:

Իրիկուն եւ առտու ըլլալով,
հինգերորդ օրը եղաւ:

Աստուած ստեղծեց մեծ ու փոքր
ամէն տեսակի կենդանիները:
Յետոյ, Աստուած մարդ ստեղծեց
իր նմանութեամբ:
Աստուած տեսաւ, որ իր ամէն
ստեղծածները լաւ են ու բարի:

Իրիկուն եւ առտու ըլլալով,
վեցերորդ օրը եղաւ:



Շնորհակալութիւն Աստուծոյ՝ Իր տուած բոլոր նուէրներուն համար

Աստուած տեսաւ որ ամէն ինչ որ ստեղծեց լաւ են ու բարի: Ան մեզի տուած է այդ բոլորը, որպէսզի վայելենք: Ահաւասիկ նկարներ, որոնք այդ նուէրներէն մաս մը ցոյց կու տան մեզի:

Գտի՛ր այն նախադասութիւնը, որ կ'ըսէ թէ ինչպէս կը սիրես Աստուծոյ ստեղծածը: Այդ նախադասութիւնը գիծով մը միացուր համապատասխան նկարին:



Ես արեւուն տակ
խաղալ կը սիրեմ:

Թռչուններուն երգը
ինծի ուրախութիւն
կը պատճառէ:

Ես խորոված ուտել կը սիրեմ:



Ինչ լաւ է գիշեր ատեն
քնանալ ու հանգչիլը:

Ոչխարներուն բուրդով
պատրաստուած տաքուկ
հագուստներ կը հագնիմ:



Գոհութեան երգ կ'երգենք Աստուծոյ, մեր Ստեղծիչին

յո
մը

Այն մարդիկը որոնք կը սիրեն Աստուած, երգեր կ'երգեն զԱյն փառաբանելու համար: Կարգ մը երգեր Աստուածաշունչին մէջ կը գտնենք: Անոնք Սաղմոս կը կոչուին: Ահաւասիկ Աստուծոյ նուիրուած երգ մը, որ եկեղեցւոյ մէջ կ'երգենք.

Գոհութիւն յայտնեցէ Տիրոջ, որովհետեւ բարի է.

Ամոր սերը յաւերժական է:

Որովհետեւ ի՞նք միայն մեծամեծ հրաշքներ կը գործէ.

Ամոր սերը յաւերժական է:

Որ իմաստութեամբ ստեղծեց երկինքը.

Ամոր սերը յաւերժական է:

Ջուրերուն վրայ հաստատեց երկիրը.

Ամոր սերը յաւերժական է:

Որ մեծ լուսատուներ ստեղծեց.

Ամոր սերը յաւերժական է:

Արեգակը ստեղծեց՝ որպէսզի ցերեկին իջի:

Ամոր սերը յաւերժական է:

Լուսինն ու աստղերը ստեղծեց՝ որպէսզի գիշերուան իջնեն.

Ամոր սերը յաւերժական է:

Սաղմոս 136.1, 4-9 (Սաղմոս 135)


Հոգեւոր բառարան

ՍԱՂՄՈՍ

Խօսքեր, որոնք կ'երգուին
Աստուած փառաբանելու համար

Ս. Ներսես Շնորհալիի գոհաբանական երգը

Ս. Ներսես Շնորհալի Աստուծոյ համար երգեր գրեց: Անիկա նոր երգեր գրեց եկեղեցւոյ մէջ երգուելու համար: Ահաւասիկ հատուած մը, որ մենք կ'երգենք առաւօտեան ժամերգութեան ընթացքին, ամէն Չորեքշաբթի օր: Անիկա կը կոչուի **Արարչութեան երգ:**



Ամէն կողմ մութ էր եւ խաւար
Աստուած առաջին օրը լոյսը ստեղծեց.
Չորրորդ օրը Ան ստեղծեց
արեւը, լուսինը եւ աստղերը:
Բոլորս ալ օրհնաբանենք Աստուած,
որ ամէն ինչ ստեղծեց:
(խաւարն անգոյ)

Դուն ալ քու բառերովդ Աստուծոյ
նուիրուած տողեր գրէ այս աստղին մէջ:

ՏԱՆ՝ ՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այսօրուան դասը ձեր զաւակին սորվեցուց ստեղծագործութեան պատմութիւնը, հիմնուած **Ծննդոց Գիրքի** առաջին գլխու **1-2** եւ **4-9** համարներուն վրայ: Մանուկները միշտ պատրաստ են տեսնելու գիրքնք շրջապատող աշխարհը եւ մեծապէս կը հրճուին երբ յայտնաբերեն անոր մէջ գտնուող իւրաքանչիւր առարկայ: Ստեղծագործութեան պատմութեան միջոցաւ մենք կը ծանչնանք մեր Արարիչ Աստուածը: Ստեղծագործութեան պատմութիւնը մեզի հիմնական ճշմարտութիւններ կը սորվեցնէ Աստուծոյ մասին, թէ՛ ի՞նչ գործեր ըրած է, եւ թէ ինչպէ՞ս կը գործէ Ան: Այն ճշմարտութիւնները որոնք մենք կը սորվինք, յաւիտեանական են, ինչպէս որ Աստուած Ինք յաւիտեանական է: Մենք կը սորվինք որ մեր Տէրը սիրող Աստուած է, որ ամէն ինչ Իր սիրոյն իբրեւ արտայայտութիւն ստեղծած է: Այն ինչ որ Աստուած ստեղծած է, գեղեցիկ է եւ սքանչելի: Մենք կը սորվինք նաեւ, որ Աստուած ամէն ինչ ստեղծած է յատուկ նպատակով եւ ներդաշնակութեամբ:

Ձեր վեց տարեկան մանուկին համար ամէնէն կարեւոր կէտը այս պատմութեան մէջ այն է, որ Աստուած է ստեղծողը ամէն բանի, եւ թէ Ան հաւնեցաւ իր ստեղծածները, որովհետեւ անոնք ամէնքն ալ լաւ էին ու բարի: Ծնողները կոչուած են Աստուծոյ ստեղծագործութիւնը շարունակելու, սիրելով իրենց ծնած զաւակները եւ վայելելով զանոնք: Տարբեր առիթներ եւ միջոցներ գտէք ցոյց տալու ձեր զաւակներուն, թէ ինչքան կը սիրէք զիրենք, եւ թէ ինչքան լաւ ու սքանչելի են իրենք: Ասիկա պիտի օգնէ, որ իրենց անձին մասին լաւ պատկերացում մը ունենան, որ շատ կարեւոր է կազմաւորման իրենց ընթացքին համար: Դուք արդէն կ'ընէք այդ բոլորը՝ իրենց ֆիզիքական կարիքները հոգալով: Ահաւասիկ քանի մը կեդրեր, որոնք կրնան այսօրուան դասին շարունակութիւնը ըլլալ, ձեր ջանքերով:

1. Ձեր զաւակին հետ վերաքաղ ըրէք ստեղծագործութեան պատմութիւնը, զայն գտնելով **Ծննդոց 1-2** եւ **4-9** գլուխներուն մէջ: Կրնաք նաեւ նոյն աշխատանքը կատարել ձեր երեխային դասագիրքին մէջէն հետեւելով բնագրին: Զաջալերեցէք որ ձեր երեխան ինք ներկայացնէ պատմութիւնը, անշուշտ ձեր օգնութեամբ:
2. Խօսեցէք ձեր երեխային Աստուծոյ ստեղծագործութեան բարի ըլլալուն մասին, ծաշ պատրաստելու ընթացքին, բնութեան մէջ եղած ատեն, երկինքը դիտելու պահուն, կամ նոյնիսկ ամէնէն փոքրիկ թռչունները նկատելու միջոցին, որոնք իրենց գեղեցիկ դայլայլով կը զուարճացնեն մեզ: Օգնեցէք անոնց, որ անդրադառնան տարուան տարբեր եղանակներուն գեղեցկութեան, արեւոտ կամ անձրեւոտ օրերու տարբերութեան, ծիւնին, ջերմ եւ ցուրտ օրերուն, եւ խօսեցէք անոնց, թէ այդ բոլոր տեսակներուն ալ պէտք ունինք:
3. Ընտանեօք սորվեցէք եւ յաճախ արտասանեցէք **Սաղմոս 136.1, 4-9** համարները: Կրնաք թուղթի մը վրայ գրել այս սաղմոսը, եւ ձեր երեխան կրնայ զայն գունագարդել:

ԱՐԵԻԸ, ԼՈՒՍԻՆԸ ԵՒ ԱՍՏՂԵՐԸ ԼՈՅՍ ԿՈՒ ՏԱՆ ՄԵԶԻ

Օրհնեցէք Տէրը... Օրհնեցէք զանհկա, ով արեւ եւ լուսին...
Օրհնեցէք զանհկա, ով բոլոր փայլուն աստղեր...

Ըստ Սաղմոսի 148.1, 3

ԳԻՏԵՐՆ՝

ԱՐԵՒՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Արեւը մեր գեղեցիկ,
Կարեց սիրուն մէկ շապիկ,
Ապա ըսաւ լուսինին, բերելով անոր մօտիկ
«Ով իմ սիրելի փոքրիկ ընկեր,
Շարժումդ կը տեսնեմ ամէն գիշեր,
Բլուրներէն կ'անցնիս դուն լեռներ,
Լուսաւորելով մութ-մութ գիշերներ.
Ահաւասիկ նուէր մը զոր ես եմ գործեր,
Շապիկ մը որ դուն հագնիս, իմ ընկեր»:

Ո՛վ արեւ, ըսաւ լուսինը անոր,
Ի՞նչ ընեմ ես այս շապիկով,
Ահա պիտի կորսուիմ կէտով,
Եւ նիհարմամ մարմինով:
Զեմ կրնար կտրել ես այս գեղեցիկ նուէրը իմ ընկեր,
Այս շապիկը զոր դուն ես կարեր,
Տար եւ տուր այն աղքատ մանուկին,
Որ հագնելու շապիկ մը չունի:

ԱՄՏՈՒ-ԱԾԱՇՈՒՄՔԵՆ

ԲԵՌԵՆԷՄԱՐ ԱՄՏՈՒ

Ըստ Մատթեոս 2.1-12, Ղուկաս 2.8-14

 Կը շողային Բեթղեհեմի երկինքին վրայ,

երբ  պահպանութիւն կ'ընէին իրենց  :

 մը երեւցաւ երկինքին մէջ եւ ըսաւ անոնց,

թէ Փրկիչ մը ծնաւ իրենց համար Բեթղեհեմի

մէջ: Անոնք  մը գտան  մէջ պառկած:

Ապա իրեշտակներու խումբ մը սկսաւ երգել.

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր

խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:



 Արեւելքի մէջ, որոնք  գիտութիւնը

ստրկած էին, նոր աստղ մը տեսան երկինքին մէջ: Անոնք գիտցան, որ ասիկա

մեծ  մը ծնունդին նշանն է: Աստղին

հետեւելով, անոնք երուսաղէմ եկան: «Ո՞ր է

նորածին  իրեաներուն, որուն

երկրպագելու եկած ենք» հարցուցին անոնք:

Հերովդէս  շատ նախանձեցաւ երբ լսեց

ասիկա: Երբ իր քահանաները ըսին թէ Փրկիչը


ծնած է Բեթղեհեմի մէջ, ան կանչեց  եւ անոնց ըսաւ. «Գացէք եւ գտէք

փոքրիկը, ապա եկէք եւ ինծի լուր տուէք, որպէսզի ես ալ երթամ անոր

երկրպագելու»:



Փայլուն  որ մոգերը տեսած էին Արեւելքի մէջ, գիրենք առաջնորդեց այն տեղը ուր մանուկը ծնած էր: Անոնք ուրախութեամբ գացին տեսնելու մանուկը եւ , անոր մայրը: Անոնք գետին ծռեցան եւ երկրպագեցին Անոր, եւ իրենց բերած նուէրները տուին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Անոնք Հերովդէսի քով չվերադարձան, որովհետեւ  երազի մէջ զգուշացուց ըսելով որ անհկա կ'ուզէ սպաննել մանուկը:



Աստուած մեզի նուիրեց ցերեկը եւ գիշերը

Առաւօտուն երբ արթնանք, ուրախութեամբ կը տեսնենք փայլող արեւը: Երբ իրիկուն ըլլայ եւ արեւը մար մտնէ, եւ լուսինը եւ աստղերը երեւին երկինքին վրայ, մենք յոգնած կ'ըլլանք արդէն:

Ահաւասիկ կարգ մը աշխատանքներ, որոնք մենք կ'ընենք ցերեկ եւ գիշեր ատեն: Ասոնք ցոյց կու տան թէ մենք ինչքան ուրախ ենք, որ Աստուած մեզի տուած է ցերեկը եւ գիշերը:

Գիծով իրարու միացուր նկարին մասին եղող նախադասութիւնը:



Պատմութիւններ մտիկ կ'ընեն
անկողինին մէջ



Կը նախաճաշեն



Առտուան աղօթքս կ'ընեն



Դպրոցին մէջ
ընկերներուս հետ կը խաղամ



Երկինքի աստղերը կը դիտեն




Կը քնանամ

Շնորհակալութեան երգեր

Եկեղեցին մեզի կը յիշեցնէ, թէ ինչ մեծ բարիք ըրած է մեզի Աստուած, արելը, լուսինը եւ աստղերը ստեղծելով: Ահաւասիկ երգ մը, որ եկեղեցւոյ մէջ կամ տան մէջ կ'երգենք, շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, որ լոյսը ստեղծեց:

Արեւելքէն մինչեւ արեւմուտք,
Հիւսիսէն մինչեւ հարաւ,
Բոլոր ժողովուրդներ աշխարհի,
Օրհնեցէք Արարիչը
Նոր օրհնութեամբ,
Որ արեւուն լոյսը ծագեցուց
Այսօր ամբողջ աշխարհի վրայ:



- Շրջանակի մէջ առ այն բառը որ Աստուած կը նշանակէ:
- Արեւ բառին շուրջը արել մը գծէ:
- Հիմա քու դէմքդ գծէ կողմնացոյցին մէջտեղը:

Սուրբ Ներսէս Շնորհալին աղօթք մը գրած է առտուան համար, որ կրնաս երգել ամէն առաւօտ:

Ընդգծէ՝ բոլոր այն բառերը, որոնք լոյս կը նշանակեն:



Հոգեւոր
բառարան

ԱՐԱՐԻՉ

Աստուած,
որ ամէն ինչ
ստեղծեց

Տես երգը յաջորդ էջին մէջ, եւ ուսուցչին հետ երգէ՛ գայն:

Ա - ռա - լօտ լու - սոյ, ա - րե - գակն ար - դար, առ իս լոյս

ծագ - եա: Բը - խումն ի հօ - րէ, բըխ - եա ի հոգ - լոյս,

բան քեզ ի հա - ճոյս:

ՏԱՆ ՄԷՋ՝ ԲՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս շաբթուան դասը կը ծանօթացնէ Աստուծոյ կողմէ ստեղծուած երկնային լուսատու մարմինները՝ արեւը, որ ցերեկը պիտի լուսաւորէ, լուսինն ու աստղերը, որոնք գիշերուան խաւարը պիտի լուսաւորեն: Աւետարանէն քաղուած պատմութիւնը մեզի կը ներկայացնէ Բեթղեհէմի հովիւներուն պատահած հրաշքը, որոնք աստղագարդ երկինքի տակ իրենց հօտերուն պահպանութիւն կ'ընէին (**Ղկ 2.8-14**), եւ երեք մոգերուն ճամբորդութիւնը, հետեւելով փայլուն աստղին, գտնելու համար մորածին արքան, Յրեաստանի Բեթղեհէմ քաղաքին մէջ (**Մտ 2.1-12**):

Մանուկները դիւրութեամբ նշմարած կ'ըլլան արդէն արեւուն ծագումն ու մար մտնելը, ինչպէս նաեւ աստղերուն երեւիլը երկինքին վրայ, մոյնիսկ լուսինն տարբեր կերպարանքներ առնելը դիւրաւ կը նշմարեն: Չափա-հասներուն համար մոյնիսկ աննկատելի կը դառնան անոնք որոշ ժամանակ ետք: Սակայն պէտք չէ մոռնանք, որ թէ՛ արեւը եւ թէ՛ աստղերը առանց Աստուծոյ հրամանին չեն կրնար երեւիլ երկինքի մէջ: Աստուած ինք պարգեւած է մեզի այս լուսատուները, որպէսզի անոնցմով կեանք տայ աշխարհին: Մեր Եկեղեցւոյ «Գիշերային ժամերգութեան» մէջ աղօթք մը կ'արտասանենք, որուն մէկ հատուածը կ'ըսէ.

Քու խաղաղութեան հրեշտակդ դրկէ, որպէսզի մեզ պահպանէ գիշեր ու ցերեկ, մեր քնացած կամ արթուն պահերուն: Դուն ես ստեղծիչը ցերեկին ու գիշերուան: Կ'աղօթենք Քեզի, Տէր Աստուած, խաղաղ գիշեր մը պարգեւէ մեզի, որպէսզի կարենանք արշալոյսին արթննալ եւ Ամենասուրբ Երրորդութիւնդ փառաւորել յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

Ահաւասիկ քանի մը առաջարկներ՝ օգնելու համար ձեր զաւակին, որպէսզի աւելիով գնահատէ Աստուծոյ տուած լոյսի պարգեւը եւ վայելէ Անոր ստեղծած բոլոր արարածները.-

1. Ամէն առաւօտ, շնորհակալական մասնաւոր աղօթք մը ըրէք Աստուծոյ: Կրնաք «Առաւօտ Լուսոյ»-ն երգել ձեր զաւակներուն հետ:
2. Ձեր զաւակներուն հետ խօսեցէք արեւուն տուած բարիքներուն մասին, մանաւանդ երբ իրենց թաց հագուստները կը չորցնէք թաց օդին, կամ համեղ պտուղները կը քաղէք ծառերէն, եւ կամ ցուրտ օրերուն յանկարծ արեւը կը տաքցնէ իրենց մարմինը: Անոնց ուշադրութիւնը հրաւիրեցէք լուսինն եւ աստղերուն վրայ գիշեր ատեն այնպիսի շրջաններու մէջ, ուր ելեկտրական լոյսերով լուսաւորուած փողոցներ չկան:
3. Ձեր զաւակին ըսէք որ մոգերուն պատմութիւնը պատմէ: Հարցուցէք անոր թէ ի՞նչ բան օգնեց իրենց, որպէսզի գտնենք մորածին արքային ծնած տեղը:
4. Ձեր զաւակը կրնայ գծել Բեթղեհէմի աստղագարդ երկինքը, այն պահը՝ երբ հովիւներ հրեշտակներէն լսեցին Յիսուսի ծննդեան աւետիսը:

ԱՍՏՈՒԱԾ ԶՈՒՐԸ ՍՏԵՂԾԵՑ ԱՇԽԱՐՀԻՆ ԿԵԱՆՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեր Աստուած, հանդարտ ջուրներուն քով կ'առաջնորդես զիս
եւ կեանքս կը նորոգես:

Ըստ Սաղմոսի 23.2-3

Գործի՞ր...

Ջուրը Աստուծոյ կարեւոր մէկ նուէրն է մեզի: Ջուրը ամէն տեղ կրնանք գտնել
մենք: Նայէ՛ նկարներուն: Նշէ այն տեղերը ուր ջուր կը տեսնես, եւ ըսէ թէ ի՞նչ կը
կոչուի ջուրը այդ վիճակին մէջ:



Ջուրին պէտք ունինք մենք ապրելու համար այս աշխարհին մէջ:

Ջուր կը խմենք, երբ ծարաւ ենք:

Ջուրով մեր աղտոտ ձեռքերը կը լուանք, նախքան ճաշելը:

Ծառերը, բոյսերը, անասունները եւ ձուկերը պէտք ունին ջուրի, որպէսզի ապրին:

Այստեղ պատկեր մը գծէ՛, բացատրելու թէ ինչպէ՞ս կ'ուզես օգտագործել ջուրը:

Յիսուս եւ իր աշակերտները լիճի մը եզերքէն կ'անցնէին, որ կը կոչուէր Գալիլիոյ
Ծով: Արդեօք ի՞նչ կար անոր մէջ:

ԱՆԱԿԱԿԱՆ յԵ ՔԱՐՈՒՈՅ ԾՈՎԷՆ


Ըստ ԴՄԲԱՐՔ 5.1-11

*Ուսուցչին հետ կարդա՛ այս
պատմութիւնը:*

Յիսուս կը քարոզէր Գալիլիոյ Ծովուն
եզերքը: Այնտեղ քանի մը ձկնորսներ
կային: Ան Սիմոնին նաւակը մտաւ,
եւ այնտեղէն սկսաւ քարոզել
Ժողովուրդին:



«Սիմոն, նաւակդ աւելի խորերը քշէ,
եւ ձեր ուռկանները նետեցէ՛ք, որպէսզի
քանի մը ձուկ բռնէք», ըսաւ ան:
Սիմոն զարմացաւ: «Վարդապետ,
ամբողջ գիշերը յոգնեցանք, եւ մէկ
հատ ձուկ չկրցանք բռնել: Այսօր ձուկ
չկայ բնաւ: Բայց քանի որ Դուն կ'ըսես,
ուռկաններդ պիտի նետենմ»:



Քիչ ետք, Սիմոն եւ իր եղբայրը՝ Անդրեաս
սկսան ուռկանները քաշել: Զարմացալի...
չէին կրնար դուրս քաշել, որովհետեւ
անոնք ծանրացած էին, եւ ահագին
ծուկերով լեցուած: «Յակոբո՛ւ,
Յովհաննէ՛ս, հոս ծուկ կայ: Եկէք եւ
օգնեցէք մեզի, որպէսզի դուրս քաշենք
ուռկանները»:



Յովհաննէսը եւ Յակոբոսը շուտով
օգնութեան հասան: «Աչքերո՛ւս չեմ
հաւատար», ըսաւ Յովհաննէս: «Երկու
մաւակները լեցուած են, եւ կրնան
ընկղմիլ, շուտով ծովափ տանինք
զանոնք»:



Երբ ապահով կերպով ծովափ հասան,
Սիմոն Յիսուսի ոտքերուն առջեւ ծունկի
եկաւ եւ ըսաւ. «Ես արժանի չեմ ասոր:
Ասիկա Դուն ըրիր»: Անոնք շատ
զարմացած էին: «Յոգ չէ՛, Սիմոն», ըսաւ
Յիսուս, «Ասկէ վերջ մարդիկ պիտի որսաս,
ծուկերու փոխարէն»:

Կարմիր գոյնով նշուած տառերը վարի պարապ ձգուած տեղերը դիր, գտնելու
համար թէ Աստուած ինչո՞ւ ստեղծեց ջուրը:

Ա _ _ _ _ _ ծ _ _ _ _ _ ջ _ _ _ _ _ դ _ _ _ _ _
_ _ _ _ _ է _ _ _ _ _ հ _ _ _ _ _ :

Ջուրը կարելոր է մեր կեանքին համար

Աստուծոյ ստեղծած ջուրը շատ թանկագին է: Ջուրը խնայողութեամբ գործածա
ատեն եւ ուրիշներուն ալ անկէ բաժին հանած ժամանակ, պէտք
շնորհակալութիւն յայտնենք Աստուծոյ: Նկարները ցոյց կու տան մարդոց կողմ
ջուրին տարբեր կերպով օգտագործումը:

- Իւրաքանչիւր նկարին նայէ՛ եւ գտիր անոր յարմար նախադասութիւնը:
- Գիժ մը քաշէ՛ նկարէն մինչեւ իր նախադասութիւնը:
- Նշան մը դիր այն նկարներուն քով, որոնք ցոյց կու տան ջուրին լաւ
գործածութիւնը:



Ինչքա՛ն հաճելի է
ծկնորսութիւն ընել այստեղ



Ջուր կը խմեն
երբ ծարաւ ըլլան



Արմէնը ջուր կը սպառէ
երբ իր ակռաները խոզանակէ



Կ'աղօթենք որ Աստուած
անձրեւ տեղացնէ



Աղբերը երբ լիճին մէջ նետենք,
ջուրը կ'աղտոտի



Կաթող խողովակները շինելով,
ջուր կը խնայենք

Ջուրը եկեղեցւոյ մէջ ալ կը գործածենք

Եկեղեցւոյ մէջ ջուրը կը գործածենք տարբեր նպատակներու համար:

Ս. Ծննդեան տօնին
ջուր կ'օրհնուի:




Երեխաները օրհնուած ջուրին մէջ
կը մկրտուին:



Աւագ Հինգշաբթի օր ջուր կ'օրհնուի,
Ունելուայի արարողութեան համար:



Սուրբ Պատարագի սկիզբը
քահանան իր ձեռքերը կը լուայ:



Քու մկրտութեանդ արարողութիւնը գծէ այստեղ:

Հոգեւոր քառարան


ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ մէջ ջուրով
լուացում,

Աստուծոյ որդեգիր
զաւակ ըլլալու համար:

Ջուրի օրհնութիւն՝ ՋՐՕՐՅՆԷՔ

Ահաւասիկ աղօթք մը, որ ջուրի օրհնութեան ժամանակ քահանան կ'ըսէ: Ան ջուրը կ'օրհնէ Սուրբ Խաչով եւ Սուրբ Աւետարանով: Ասիկա ուսուցիչին հետ երգէ: Ապա զայն աւելցուր վարը՝ պարապ մնացած տեղերը:



Պակսող երեք բառերը
իրենց ճիշդ տեղերը դիր
նախադասութեան մէջ:

Հոգիին

Որդիին

Հօր



Թող օրհնուի այս ջուրը
Սուրբ Խաչին նշանով
եւ Սուրբ Աւետարանով,
..... եւ
Սուրբ անունով.
Ամեն:

ՏԱՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասին ճամբով ձեր զաւակը աւելի եւս պիտի գիտակցի, թէ Աստուած ջուրը ստեղծեց ապրող բոլոր արա-
րածներուն համար: Ջուրին տարբեր գործածութիւնները մատնանշող պարտականութիւններուն միջոցաւ, այս
դասը աշակերտները կը մղէ անդրադառնալու, թէ ինչքան կարեւոր է ջուրը այս կեանքին մէջ՝ մաքրութեան թէ վա-
յելքի համար: Ղուկասու Աւետարանէն քաղուած հրաշալի ձկնորսութեան դրուագը ձեր զաւակներուն ուշադրու-
թիւնը կը կեդրոնացնէ թէ Աստուծոյ պարգեւները ինչքա՛ն շատ են նաեւ լիճերուն ու գետերուն մէջ, եւ ինչքա՛ն
շատ էակներ ունին իրենց մէջ, մարդոց բարիքին ու վայելքին համար: Մանուկները այս դասով սորվեցան նաեւ,
որ եկեղեցին ջուրը կ'օրհնէ, իբրեւ նշան Աստուծոյ կողմէ մեր օրհնութեան: Անոնք սորվեցան նաեւ թէ ջուր կ'օրհ-
նուի եկեղեցւոյ մէջ Ս. Ծմնդեան տօնին, իբրեւ խորհրդանշան Յիսուսի մկրտութեան Յորդանան գետին մէջ: Նաեւ
սորվեցան Աւագ Հինգշաբթի օր, Ռտմուլայի առիթով օրհնուող ջուրին մասին, երբ Յիսուս իր աշակերտներուն
ոտքերը լուաց: Անոնք ի վերջոյ սորվեցան թէ իրենք ալ օրհնուած ջուրի մէջ մկրտուած են: Չմոռնանք ըսելու, որ
անոնք նաեւ այս դասով սորվեցան, որ քահանան պատարագը սկսելէ առաջ իր ձեռքերը կը լուայ ջուրով:

Աւելի եւս դրոշմելու համար այս գաղափարները ձեր մանուկին մտքին մէջ, ահաւասիկ կարգ մը ձեւեր ձեգի:
Ասոնցմէ ոմանք ձեր տան մէջ, ընտանիքի անդամներուն հետ կրնաք ընել.

1. Միասնաբար կարդացէք **Ղուկաս 5.1-11** համարները: Ձեր զաւակին ըսէք, որ հրաշալի ձկնորսութիւնը գծէ
եւ իր բառերով պատմէ դրուագը:
2. Ձեր զաւակներուն հետ խօսեցէք ջուրի մաքուր պահպանումին մասին, եւ թէ ինչո՞ւ պէտք է աւազանները
մաքուր պահել: Առաջարկեցէք որ իրենք ըսեն թէ ինչպէ՞ս կարելի է ջուրը խմայել: Կրնան ցուցանակներ
շինել եւ խոհանոցին մէջ կամ ծորակներուն մօտ դնել, զգուշացնելով գործածողները ջուրը մսխելէ:
3. Միասնաբար փորձ ըրէք ջուրի օրհնութեան երգը երգելու, զոր դասարանին մէջ սորված են, որպէսզի ապա-
գային եկեղեցւոյ մէջ «Ամեն ալելուիա»-ն կարենան երգել: Բառերը կան դասագիրքին մէջ:
4. Ջրօրհնէքէն ետք փոքր շիշի մէջ ջուր լեցնելով տուն բերէք, իբր օրհնութիւն:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՐ ԿԱՏԱՐԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամեն ժամանակ Տերը պիտի գովեմ:

Ըստ Սաղմոսի 34.1

Գրե՛ր...

Ամեն մարդ կ'ուզե գովուիլ, երբ լաւ աշխատանք մը կատարած է: Մենք այդ մարդուն կ'ըսենք. «Ապրի՛ս», «Շատ լաւ աշխատեցար», «Բացառիկ ես»: Շատ կերպեր կան մեր գնահատանքը յայտնելու մարդոց:

Նայիր այս նկարներուն եւ անոնց մէջէն ընտրե՛ այն պատկերները, որոնց մէջ ցոյց կը տրուին մարդիկ, որոնք իրենց գործով կը փառաւորեն Աստուած: Ըսե՛ թէ ի՞նչ կը ներկայացուի իւրաքանչիւրին մէջ:

Ժպտուն երես մը ☺ գծե՛ ընտրած նկարներուդ կողքին:



Ո՞ր են ինչ ձեւով պիտի ուզէիր գնահատուիլ: Կլորակի մէջ առ ընտրած քառու:

Ողջագուրուիլ

Ծափահարուիլ

Նուէր ստանալ

Խօսքով գնահատուիլ

Մենք Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնենք զանազան միջոցներով: Յաջորդ էջին նայե՛ եւ այնտեղէն կերպ մը սորվի՛ր:

Օրհնե՛ժէ ԶԱստուած Իր բոլոր ստեղծածներուն Համար:

Հստ Ստորոտ 148

Աստուծոյ արարածներ, օրհնեցէք Անոր



Երկինք, օրհնեցէք Աստուած.
Հրեշտակներ, օրհնեցէք Աստուած:



Արեւ եւ լուսին, օրհնեցէք Աստուած.
Փայլուն աստղեր, օրհնեցէք Աստուած:

Գիշեր եւ ցերեկ, օրհնեցէք Աստուած.
Լոյս եւ խաւար, օրհնեցէք Աստուած:



Մեծ եւ փոքր ձուկեր, օրհնեցէք Աստուած.
Գետեր ու ծովեր, օրհնեցէք Աստուած:



Լեռներ ու բլուրներ, օրհնեցէք Աստուած.
Պտղատու ծառեր եւ բարձրահասակ մայրիկներ,
օրհնեցէք Աստուած:



Առիւծներ եւ ոչխարներ, օրհնեցէք Աստուած.
Օձեր, սողուններ եւ թռչուններ,
օրհնեցէք Աստուած:



Բոլոր ազգեր, միասնաբար օրհնեցէք Աստուած:



Աղօթքով Աստուած կ'օրհնենք

Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնենք այս աշխարհը ստեղծելուն համար: Շնորհակալութիւն կը յայտնենք մեզի կեանք պարգեւելուն համար, որպէսզի վայելենք ամբողջ աշխարհը: Երբ աղօթենք, այս բոլորին համար շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ:

Աղօթքը երկու բարեկամներու իրարու հետ ունեցած խօսակցութեան նման է: Աղօթած ժամանակ մենք թէ կը խօսինք Աստուծոյ հետ եւ թէ կը լսենք զինք: Ամէն տեղ եւ ամէն ժամանակ կրնանք աղօթել: Աստուած գոհ կը մնայ եթէ յաճախ խօսինք Իր հետ:


Այս նկարները ցոյց կու տան մարդիկ, որոնք տարբեր վայրերու մէջ կ'աղօթեն: Շրջանակի մէջ առ այն նկարները, որոնց մէջ ցոյց կը տրուին այն վայրերը, ուր դուն կ'աղօթես:



Ժպտտուն դէմք մը ☺ գծէ այն նկարին կողքին, որ ցոյց կու տայ այն վայրը, ուր դուն յաճախ կ'աղօթես:

Եկեղեցին միասնաբար կ'աղօթէ

Եկեղեցւոյ հաւատացեալները միասնաբար կ'աղօթեն: Եկեղեցին յատուկ տեղ մըն է, ուր մենք կ'երթանք աղօթելու: Եկեղեցւոյ մէջ մենք տարբեր ծեսերով շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ:





Ահաւասիկ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելիք սաղմոս մը, որ կ'երգենք եկեղեցւոյ մէջ: Ձեր ընկերներուն հետ երգեցէք գայն եւ օրհնեցէք զԱստուած:

**Օրհնեցից գՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ,
օրհնութիւն նորա ի բերան իմ:**

Սաղմոս 34.1

Սուրբ Պատարագի ժամանակ կը փառաբանենք զԱստուած

Յիսուս յատուկ ճաշ կերաւ իր աշակերտներուն հետ, Վերջին Ընթրիքի պահուն:
Ան օրհնեց հացը եւ գինին եւ տուաւ իր աշակերտներուն:



Նոյն այդ ճաշը մենք կ'ուտենք, երբ Սուրբ Պատարագին մասնակցինք: Գտնելու համար թէ մենք ինչպէ՞ս կը փառաւորենք Աստուած այս արարողութեան ընթացքին, տուիին մէջէն ընտրէ՛ ճշգրիտ բառը եւ ամբողջացո՛ւր նախադասութիւնը:

Մենք երգեր շնորհակալութիւն
յայտնելու:

Կը լսենք

Մենք Աստուծոյ խօսքը :

Կը ճաշակենք

Կ'երգենք

Մենք շնորհակալութիւն կը յայտնենք Անոր,
երբ հացը եւ գինին
Սուրբ Հաղորդութեան պահուն:

Հոգեւոր բառարան
**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ
ՅԱՅՏՆԵԼ**

Պատիւ ընծայել Աստուծոյ

Ահաւասիկ Աստուած օրհնաբանելու երգը, որ կ'երգենք Սուրբ Պատարագի աւարտին: Թերեւս արդէն գիտես զայն: Ուրախութեամբ երգէ ամէն անգամ երբ Սուրբ Պատարագին ներկայ ըլլաս:

Ա. մեն: Ե - դի - ցի ա - նուն
Տեառն օրհ - նեալ յայ - սըմ - հե - տէ մին - չեւ յա - լիտ - եան:
Ե - դի - ցի ա - նուն Տեառն օրհ - նեալ յայ - սըմ - հե - տէ
մին - չեւ յա - լիտ - եան: Եւ ե - դի - ցի ա -
նուն Տեառն օրհ - նեալ յայ - սըմ - հե - տէ մին - չեւ յա -
լիտ - եան:

ՏԱՆՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասին մեջ շեշտը դրուած է Աստուծոյ գոհաբանութիւն ընծայելուն, այն սիրոյն եւ այն բոլոր բարիքներուն համար, զորս Ան պարգեւած է մեզի Իր ստեղծագործութեան միջոցաւ: Երեխաներուն ուշադրութիւնը կը հրաւիրուի, թէ մենք ինչպէ՞ս գիրար կը գովենք ու շնորհակալութիւն կը յայտնենք կատարուած աշխատանքի մը համար: Նոյնպէս ալ, մարդիկ կոչուած են շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, այս գեղեցիկ աշխարհը սիրով մեզի տուած ըլլալուն համար: **Սաղմոս 148**-ը յստակօրէն կը բացատրէ եւ ցոյց կու տայ մեզի, թէ ամբողջ ստեղծագործութիւնը ինչպէ՞ս գոհաբանութիւն կ'ընծայէ Աստուծոյ, երբ անոնցմէ իւրաքանչիւրը կը կատարէ այն պարտականութիւնը, որուն համար ստեղծուած է: Ինչքան դաստիարակիչ ու սքանչելի պատգամ մըն է ասիկա մանուկի մը համար՝ գիտնալ թէ գեղեցիկ մանուկ մը ըլլալով, ինք ալ գոհաբանութիւն կ'ընծայէ Աստուծոյ: Անոնք նաեւ սորվեցան, թէ հաւատացեալներ հաւաքապէս ինչպէ՞ս կը գոհաբանեն զԱստուծո, եկեղեցական արարողութեանց ընթացքին, յատկապէս Սուրբ Պատարագի ժամանակ: Օգնեցէք ձեր երեխային շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, հետեւեալ կերպերը օգտագործելով:-

1. Քաջալերեցե՛ք ձեր երեխան, որ իր յաջողութեանց մէջ զնստունած փառանքիւ:
2. Սորվեցուցե՛ք անոր, որ իր կեանքի լաւ եւ վատ դէպքերուն պարագային «Փառք քեզ Տէր» ըսէ:
3. Առիթներ ստեղծեցե՛ք յաճախակիօրէն եկեղեցի յաճախելու, յատկապէս Կիրակի օրերը՝ Սուրբ Պատարա-գին, որպէսզի սորվի ժողովուրդին հետ մասնակցիլ Աստուծոյ ընծայուած գոհաբանութեան:

Աստուած իր սիրով ստեղծեց գիւ:
 Ան ինծի աչքեր տուաւ, որպէսզի տեսնեմ:
 Ականջներ՝ որպէսզի լսեմ, բերան՝ որպէսզի խօսիմ,
 ձեռք ու ոտքեր՝ որպէսզի խաղամ: Աստուած կ'ուզէ
 որ ես մեծնամ եւ սորվիմ զինք սիրել:





Սիրելի ծնողներ

Մանուկները այս տարիքին շատ արագ կ'աճին: Իրենց ֆիզիքական աճին հետ կը զարգանան նաեւ իրենց կարողութիւնները եւ կը կազմաւորուի իրենց ինքնութիւնը իբրեւ իրարմէ տարբեր անհատներ՝ ստեղծուած Աստուծոյ կողմէ:

Այս դասը գիտակից կը դարձնէ երեխաները թէ ո՞վ են իրենք Աստուծոյ աչքին եւ կը մղէ զանոնք շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, իրենց պարգեւած այս կեանքին համար:

ԻՆՉ ՍՔԱՆՉԵԼԻ ԱՐԱՐԱԾ ՄԸՆ ԵՄ ԵՍ

Տէ՛ր, շնորհակալութիւն կը յայտենմ Քեզի,
զիս սքանչելի կերպով ստեղծած ըլլալուդ համար:
Ըստ Սաղմոսի 139.14

ԳՐՏԷՐՈ՞Ւ...

Նայէ՛ այս նկարներուն: Ասոնցմէ ո՞ր մէկը կրնաս **ուտել** եւ **համտեսել**, ո՞ր մէկը կրնաս **լսել**, ո՞ր մէկուն կրնաս **դպչիլ** եւ **զգալ**, ո՞ր մէկը կրնաս **հոտոտալ**, ո՞ր մէկը կրնաս **տեսնել**: Գի՞ծ մը քաշէ՛ իւրաքանչիւր նկարէն դէպի համապատասխան բառը:



տեսնել

լսել



համտեսել


հոտոտալ



դպչիլ



Այս եռանկիւնին մէջ քաղցրեղէն մը գծէ,
որ շատ կը սիրես ուտել:



Եկէք պարտեզին մէջ քալենք մարդոց հետ, որոնք շատ մը լաւ բաներ տեսած,
լսած, հոտոտացած, դպած եւ համտեսած են:

ԱՄՏՈՒԱԾԱԾՈՒՆՉԷՆ

ՊՏՈՅՑ Եդեսի Պարտեզին մէջ

Ըստ Ծանոթ 1.26-31, 2.8-9

Աստուած իր պատկերին համաձայն ստեղծեց Ադամը եւ Եւան: Անոնք Աստուծոյ քով՝ Եդեսի Պարտեզին մէջ էին:

Ադամ շատ կը սիրէր Եւային հետ քալել պարտեզին մէջ: Արեւը շատ պայծառ էր եւ ինչքա՛ն նորութիւններ կային տեսնելիք:

Անոնց ականջներուն կը լսուէին ինչքա՛ն ձայներ. թռչունները կ'երգէին, մեղուները կը տզգային, կովերը կը բառաչէին, առիւծները կը մռնչէին, եւ ջուրին ձայնը կու գար ջրվէժներէն:

Եւան շատ սիրեց պաղ ջուրը որ վերէն կը հոսէր, եւ իր երեսը լուաց: Ան կը սիրէր նաեւ ծաղիկներուն անուշ բոյրը:



Աղամը ծիրանի ծառին մօտեցաւ, նայելու որ անոր պտուղը հասունցե՞ր է: Ան քաղեց անկէ քիչ մը, որպէսզի եւան համտեսէ այդ պտուղը:


Երբ արեւը մարը մտաւ, լուսինը սկսաւ ժպտալ անոնց, եւ փայլուն աստղերը լուսաւորեցին մութ երկինքը:

Առաւօտուն երբ արթնցան, Աստուած դարձեալ իրենց հետ էր: Ան ըսաւ անոնց. «Այս ամէնը ձեզի տուած եմ: Հոգ տարէք ամէն բանի եւ վայելեցէք»:



Մեր բոլոր զգայարանքներով, շնորհակալութիւն կը յայտենք Աստուծոյ

Եկեղեցւոյ մէջ մեր բոլոր զգայարանքները կը գործածենք օրհնելու համար Աստուած: Նայէ՛ այս նկարներուն:



Քանի՞ մօմ կը տեսնես խորանին վրայ:
Շրջանակի մէջ ա՛ռ ճշգրիտ պատասխանը:

8

12

9

Որո՞ւ պատկերն է այս, որ խորանին վրայ
դրուած կ'ըլլայ: Երկու անուն շրջանակի մէջ առ:

Յովհաննէս

Աստուածածին

Յիսուս



Սարկաւազը գիրքի մը մէջէն Աստուծոյ խօսքը կը
կարդայ: Շրջանակի մէջ ա՛ռ թէ ո՞ր գիրքէն կը կարդայ:

Շարակնոց

Աստուածաշունչ

Ես կը հոտոտամ անուշ բոյրը
որ Աստուծոյ կ'ընծայենք:

Ճիշդ պատասխանը գրէ՛ բաց ձգուած տեղը:

մոմերուն

խունկին



Աղջկան ձեռքը ի՞նչ կայ:

Շրջանակի մէջ ա՛ռ ճիշդ բառը:

խաչ

մոմ

Երբ Ասուր Չաղորդութիւն ստանամ,
..... համը կ'առնեն:

Շրջանակի մէջ ա՛ռ **երկու** ճիշդ բառերը:

գինիի

խաղողի

հացի



Հոգեւոր բառարան

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Յիսուսի մայրը

Խաչին նշանը

Հայ եկեղեցւոյ մէջ խաչի յատուկ նշան մը ընելով ցոյց կու տանք, որ Յիսուսի կը պատկանինք: Աջ ձեռքիդ առաջին երեք մատները իրարու միացո՛ւր, որպէս նշան Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին հանդէպ ունեցած հաւատքիդ: Ապա խաչակնքէ՛ դէմքդ արտասանելով այն բառերը, որ գրուած են նկարներուն տակը, երբ ձեռքդ կը տանիս նշուած տեղերը:



Յանուն Հօր



Եւ Որդւոյ



Եւ Հոգւոյն



Սրբոյ



Ամէն

ՏԱՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասին ընթացքին զաւակդ սորվեցաւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնել իր հինգ զգայարանքներով՝ տեսողութեամբ, դաչելով, համտեսելով, հոտոտալով եւ լսելով, որոնք Աստուծոյ մեզի տուած պարգեւներն են: **Ծննդոց (1.26-31, 2.8-9)** այս հատուածով անոնք սորվեցան թէ Ադամն ու Եւան կրնային տեսնել, լսել, համտեսել, դաչիլ եւ հոտոտալ սքանչելի բնութիւնը, կենդանական աշխարհը, հողը, ջուրը եւ ինչ որ գոյութիւն ունէր երկինքին մէջ: Ահաւասիկ քանի մը խորհուրդներ, որոնք կ'օգնեն անոնց հոգեւոր աճը ծաղկեցնելու:

1. Ձեր զաւակին ըսէք, որ դարձեալ պատմէ աստուածաշնչական պատմութիւնը, որ դարոցին մէջ լսած էր: Ապա Աստուածաշունչէն բացէք **Ծննդոց 1.26-31** հատուածը եւ միասնաբար կարդացէք:
2. Կարգ մը երեխաներ կը սիրեն իրենց ֆիզիքական կարողութիւններու աճումը տեսնել: Քաջալերեցէք ձեր զաւակը, որ անուններ դնէ իր սիրած բաներուն, որոնք տան կամ շրջապատին մէջ կը տեսնէ յաճախ: Ո՞ր պտուղները աւելի կը սիրեն համտեսել, կամ որո՞նք չեն սիրեր: Ի՞նչ ձայներէ եւ բոյրերէ կ'ախտորժին: Իրենց ձեռքին ո՞ր մասը շօշափելու համար կը գործածեն: Յիշեցուցէք թէ այս բոլորը Աստուծոյ տուած պարգեւներն են իրենց եւ հոգածութեամբ պէտք է գործածուին: Աստուած Ադամին ու Եւային ըսաւ թէ հոգ պէտք է տանին Իր ստեղծագործութեան: Ասիկա կը նշանակէ թէ մենք մեր մարմինն եւս հոգ պէտք է տանինք, եւ մեր կարողութիւնները լաւ բաներու գործածենք, փառաւորելով Աստուած:
3. Խաչակնքումի փորձեր կատարեցէք ձեր զաւակին հետ միասին, յիշելով մեր եկեղեցւոյ հայրերէն Վարդան Վարդապետին խօսքը, որ կ'ըսէ. «Ծնողներ, անմիջապէս որ ձեր զաւակը աջն ու ձախը զատորոշէ իրարմէ, խաչակնքել սորվեցուցէք անոր...»:
4. Եթէ ընտանեօք մկրտութեան մը ներկայ գտնուած էք, վերյիշեցէք թէ ի՞նչ տեսաք այնտեղ, արարողութեան ընթացքին: Ջուրով լուալէ ետք, հոգեւորականը մկրտուած երեխային մարմնի 9 մասերը խաչանիշ կ'օծէ Սուրբ Միւռոնով: Ձեր օգնութեամբ, ձեր զաւակը թող այդ մասերը ըսէ (ճակատ, աչքեր, ականջներ, քիթ, բերան, սիրտ, ձեռքեր, կոնակ եւ ոտքեր): Անոնց հարցուցէք, թէ «Ինչպէ՞ս պէտք է վարուիմք Աստուծոյ պարգեւած մեր մարմնին հետ»: Օգնեցէք որ որոշեն հետեւեալները.
 - Մեր աչքերով լաւ բաներու պիտի նայինք, երես դարձնելով վատ բաներուն:
 - Մեր բերանը պիտի գործածենք ճշմարտութիւնը խօսելու եւ առողջարար կերակուրներ ուտելու:
 - Մեր ականջները պիտի գործածենք Աստուծոյ խօսքը լսելու, եւ պիտի փակենք զանոնք վատ խօսքերու եւ սուտերու դիմաց:
 - Մեր ձեռքերը պիտի գործածենք բարիք գործելու եւ ոչ թէ չարիք:
5. Ձեր երեխան թող ասոնցմէ մէկը ընտրէ, եւ գրէ թէ ի՞նչ պիտի ընէ ատիկա գործադրելու համար: Իր գրածը տան մէջ տեղ մը կախեցէք, որպէսզի տեսնէ եւ յիշէ իր ըսածները:
6. Սորվեցուցէ՛ք ձեր զաւակներուն իրենց օրը սկսիլ **Սաղմոս 90.17** համարով, որ առաւօտեան ժամերգութեան սկիզբը կ'արտասանենք մեր եկեղեցւոյ մէջ:

«Ձգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ, Տէր. Ամէն»:

ԱՍՏՈՒԱԾ ՁԻՍ ԿԸ ՃԱՆՉՆԱՅ ԻՄ ԱՆՈՒՆՈՎԱՍ

Տերը կ'ըսէ. «Քեզ քու անունովդ կանչեցի. դուն իմա ես»:

Ըստ Եսայիի 43.1

ԳԻՏԷՐՆՆԵՐ...



Դպրոցի առաջին օրն է: Արմենը իր մօր հետ դպրոց կու գայ: Արմենը նեղուած է, որովհետեւ անծանօթ դէմքեր կը տեսնէ:

«Բարի լոյս, Արմեն» կ'ըսէ մէկը իրեն: «Բարի եկար մանկապարտէզի Բողբոջ դասարանը, Արմեն, ուրախ ենք որ այստեղ ես դուն»: «Ուսուցիչը անունս գիտէ արդէն, ինչ լաւ է: Մէկը կայ ուրեմն որ գիտէ կը ճանչնայ», կ'ըսէ Արմենը իր մօր:



Անունները շատ կարեւոր են: Ծնողներդ յատուկ կերպով քու անունդ ընտրած են եւ քեզի տուած: Ուրախ կը զգաս, երբ մէկը քեզ անունովդ կանչէ: Անունդ գրէ՛ այս անունի թղթիկին վրայ: Ապա կրնաս զարդարել անունիդ այդ թղթիկին շուրջը:

Ի՞մ անունս է

Հիմա պիտի սորվինք, թէ Մարիամ եւ Յովսէփ ինչպէ՞ս որոշեցին Յիսուսի անունը:

ԱՄՏՈՒԱԾԱՆՈՒՆՉԷՆ

ՅԻՍՈՒՍ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Ըստ Ղուկաս 2.21-40

Ձեր ուսուցչին հետ կարդացեք այս պատմութիւնը: Այստեղ դրուած բառարանին մէջի բառերը օգտագործեցեք եւ գրեցեք զանոնք իրենց ճիշդ տեղերը:



Առաւօտուն Մարիամ արթնցաւ, կերակրելու համար մանուկը:

«Մարիա՛ն, այսօր մանուկին ծննդեան ութերորդ օրն է: Ժամանակն է որ անոր մը տանք», ըսաւ Յովսէփ:

«Յովսէփ, Գաբրէիլ հրեշտակը ինծի ըսաւ, որ զանիկա Յիսուս պէտք է կոչենք», ըսաւ Մարիամ:

Յովսէփ ըսաւ. «Մարիամ, երագիս մէջ լսեցի, որ ինծի կ'ըսէր անոր անունը պիտի դնես, որովհետեւ անիկա իր ժողովուրդը պիտի փրկէ»:

Բառապաշար

Յիսուս

հրեշտակ


անուն

Ապա, Մարիամ եւ Յովսէփ գրկեցին մանուկը, աղօթեցին եւ զայն Յիսուս կոչեցին:

Երբ Յիսուս քառասուն օրուան եղաւ, Մարիամ եւ Յովսէփ Բեթղեհէմէն
 եկան, իշուկի մը վրայ նստած: Անոնք Յիսուսը Տաճար ուզեցին
 բերել, շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ:

Տաճարին մէջ բարի ծերունի մը կար, որուն անունը էր: Անկա
 մօտեցաւ անոնց, ուրախութեամբ նայեցաւ Յիսուսին, ապա գրկեց զայն եւ
 աղօթեց ըսելով. «Շնորհակալ եմ քեզի ո՛վ
 Աստուած, որ խոստումդ կատարեցիր:
 Դուն ըսիր որ ես պիտի չմեռնիմ, մինչեւ որ
 տեսնեմ: Եւ ես հիմա գրկած
 եմ զայն»:

Մանուկը ետ իր մօրը տալով, անոր
 աչքերուն նայեցաւ եւ ըսաւ. «Քու զաւակդ
 է: Աստուած բացառիկ
 ծրագիր մը ունի Անոր համար»:



Բառապաշար

Երուսաղէմ

Սիմէոն

Փրկիչ

յատուկ

Հոգեւոր բառարան

ՓՐԿԻՉ

**Յիսուս, որ աշխարհ
 եկաւ**

Իմ անուանակոչության օրը

Հինէն ի վեր հրեական ընտանիքները սովորութիւն ունէին իրենց նորածիններուն անունը դնել ծննդեան ութերորդ օրը: Հայ Առաքելական Եկեղեցւոյ զաւակները իրենց նորածիններուն անունը կը դնեն անոր մկրտութեան ժամանակ, մօտաւորապէս երբ մանուկը քառասուն օրուան է արդէն:

Մկրտութեանդ օրը, ծնողքդ քեզի եկեղեցի տարաւ: Մեծ ծնողներդ եւ հայրդ ու մայրդ քահանայէն խնդրեցին քեզ մկրտել:

Բնաւ տեսա՞ծ ես ուրիշ մանուկի մը մկրտութիւնը:

1. Քահանան մկրտութեան աւագանին մէջ լեցուած ջուրը կ'օրհնէ:



2. Ապա մանուկը կը մկրտէ օրհնուած ջուրին մէջ, երեք անգամ ջուրին թաթխելով եւ ըսելով. «Գեորգը այժմ կը մկրտուի Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով»:




3. Մանուկը այսպիսով անդամ կը դառնայ Աստուծոյ ընտանիքին:



Մկրտութենէն ետք, քահանան յատուկ վկայագիր թուղթ մը կու տայ ծնողներուն:

Պարապ ձգուած մասերը լեցուր, ամբողջացնելու համար
մկրտութեան վկայագիրդ: Ծնողներուդ կրնաս հարցնել, որպէսզի օգնեն քեզի:



ՎԿԱՅԱԳԻՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ



անունդ _____

զաւակն է _____

_____ ԵՆ
հօր անուն

_____ ԵՆ
մօր անուն

_____ ԵՆ
ընտանիքին մականունը

մկրտուած է _____

_____ օր

_____ ամիս

_____ տարի

_____ ԵՆ
եկեղեցւոյ անունը

Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ

_____ ԵՆ
մկրտող քահանային անունը

ծեռամբ:

Կնքահայրութեամբ՝ _____

_____ ԵՆ
կնքահայրին եւ կնքամայրին անունը

_____ ԵՆ
մկրտող քահանային ստորագրութիւնը

ԱՆՈՒՆՆԵՐԸ ԻՃԱՍՏ ՈՒՆԻՄ

Ծնողները ընդհանրապես իրենց ծնողներուն անուաները կը դնեն իրենց զաւակներուն, եւ կամ քրիստոնեայ սուրբի մը անունը կու տան անոնց: Շատ մը անուաներ մասնաւոր իմաստ մը կ'ունենան: Օրինակ, Արի կը նշանակէ քաջ, Զուարթ կը նշանակէ հրեշտակ: Քու անունիդ իմաստը գիտե՞ս: Եթէ չես գիտեր, հարցուր ծնողքիդ կամ ուսուցիչիդ եւ այստեղ գրէ անունիդ իմաստը:

Իմ անունս _____ կը նշանակէ:

Անուաններուն դիմացը դրուած նախադասութիւններէն ընտրէ անոնց ճիշդ իմաստը:

Մարալ

արթուն

Յարութիւն կամ **Յարութ**

թանկագին քար

Գրիգոր

Եղնիկ կամ գեղեցիկ աղջիկ

Գոհար

Յիսուսի յարութիւնը

ՏԱՆՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Մեզի մարդիկ մեր անունով կը ճանչնան: Իբրեւ ծնողք առիթ ունեցած էք անուն մը ընտրել ձեր զաւակին: Պէտք է յիշէք թէ ի՞նչ նախանձախնդրութեամբ կատարեցիք այդ ընտրութիւնը ձեր մանուկին համար: Յիսուսի անունակոչութեան եւ Տաճար ընծայումի դրուագին ճամբով, մենք անգամ մը եւս կ'անդրադառնանք իւրաքանչիւր մանուկի անուն մը տալու կարեւորութեան: Այն համարը զոր ձեր զաւակը սորվեցաւ այսօր Եսայի մարգարէի գիրքէն, մեզի կու տայ այն ուրախութիւնը եւ հանգստութիւնը, թէ Աստուած մեզ կը ճանչնայ մեր անունով, եւ թէ մենք բոլորս իրեն կը պատկանինք: Աւետարաններուն մէջ կը կարդանք նաեւ, որ հրեշտակը Նոյնիսկ Մարիամէն ծնելիք մանուկին անունն ալ կը յայտարարէ: Անոր անունը Յիսուս պիտի դրուէր, որովհետեւ անկա իր ժողովուրդը պիտի փրկէր:

Բազմաթիւ սովորութիւններ կան հայ ժողովուրդին մօտ երեխայի մը անուն տալու պարագային: Ծնողներ իրենց նորածինները կը կոչեն կամ իրենց սիրելի ծնողներուն անունով եւ կամ սուրբի մը անունը կու տան անոնց: Այսպէս կ'ընենք, որպէսզի այդ երեխան տիպար անձի մը հետեւի, ըլլայ ան մեծ հայր կամ մայր մը, եւ կամ սուրբ մը: Բնականաբար ասիկա նաեւ որոշ նշանակութիւն մը կու տայ իրենց անունին: Սովորութիւն է նաեւ, որ տուեալ սուրբի տօնին անձին անուանակոչութեան տօնը կատարուի: Օգնեցէ ձեր զաւակներուն, որպէսզի արժէքը գիտնան իրենց եւ ուրիշներուն տրուած անուններուն: Ահա թէ ինչ կրնաք ընել այս իմաստով.

1. Անուանաքարտ մը թող պատրաստէ ձեր զաւակը եւ լաւապէս զարդարէ զայն: Անոր վրայ իր անունը թող գրէ, մկրտութեան թուականը՝ երբ իր անունը ստացած է, այն անձին կամ սուրբին անունը, որուն անունը ստացած է ինք, եւ այդ անունին իմաստը: Եթէ երեխայի մը տրուած է սուրբի մը անունը, քահանայէն իմացէք այդ սուրբին յիշատակի տօնին թուականը, եւ այդ ալ գրեցէք այնտեղ: Ասիկա պիտի ըլլայ իր անուանակոչութեան թուականը:
2. Ձեր երեխային անուանակոչութեան օրը անպայման եկեղեցի յաճախեցէք: Երեխան թող լսէ թէ ո՞վ է այն սուրբը, որուն անունը տրուած է իրեն: Թող ձեր երեխան սորվի, թէ կրնաք այդ սուրբէն աղօթք խնդրել: Կրնաք նաեւ այդ սուրբին նկարը ցոյց տալ եկեղեցւոյ մէջ:
3. Միասնաբար կրկնեցէք Եսայիի մարգարէութեան հետեւեալ համարը. «Ես քեզ անունով կանչեցի, դուն իմս ես»: Միասնաբար ըսէք ասիկա, որպէս յիշեցում ձեր երեխային, թէ Աստուած ինչքան կը սիրէ զինք, եւ թէ ինք Աստուծոյ կը պատկանի:

ԵՍ ԿՐՆԱՄ ԼՍԵԼ ԵՒ ՄՏԻԿ ԸՆԵԼ

«Տէր, ցնծութեամբ եւ ուրախութեամբ լեցուր զիս»:

Ըստ Սաղմոսի 50.10

Գրեցի՞ր...

Աստուած մեզի տուած է երկու ականջներ: Մեր ականջներով շատ մը ձայներ կը լսենք: Նկարներուն նայէ՛:

Շրջանակի մէջ առ այն նկարները, որոնց մէջ ներկայացուած ձայները ամէն օր կը լսես:



Մենք ազատ ենք լսելու եւ մտիկ ընելու լաւ բաներ, եւ մերժելու լսել տխուր բաներ: Այո՛րք այն նկարներուն առջեւ, որոնք մտիկ ընելու լաւ կերպեր ցոյց կու տան, եւ **ոչ** գրէ՛ անոնց կողքին, որոնք շատ լաւ չեն:



«Բնաւ չեմ ուզեր
որ մայրս կանչէ զիս»:




«Ես կրնամ պատասխանել
հարցումիդ, Օրդ. Թալին»:



«Կ'ուզեմ լսել թէ Յասմիկը
ի՞նչ կ'ըսէ Անիին մասին»:



«Մի՛ շարժիր, ես քեզ
կը վերցնեմ»:



Հաւկթածել գիծին մէջ գծէ այն բանը կամ պահը, երբ քու սիրած մէկ ձայնդ կը լսես: Երբ աւարտես, մտիկ ըրէ Սամուէլին պատմութիւնը, որ շատ լաւ մտիկ ըրաւ:

ՍԱՄՈՒԷԼ յԵՏԻԿ ԿՐԱԷ

Ըստ ՍԱՄՈՒԷԼ 1.21-28, 2.18-21, 3


Սամուէլ իր ծնողներուն՝ Աննայի եւ Էլիանայի հետ Սելովմ գնաց, Տիրոջ Տաճարը՝ Աստուած պաշտելու համար: Սամուէլ Զեղի քահանային մօտ մնաց օգնելու համար անոր՝ հոգ տանելու Աստուծոյ Տան:



Սամուէլ ամէն օր բաւարար ձեթ կը լեցնէր կանթեղին մէջ եւ փայտեր կը պատրաստէր կրակին համար: Ան կ'աւլէր, փոշիները կ'առներ եւ կը մաքրէր Տաճարը: Ապա, գիշեր ատեն դուռը լաւ մը կը գոցէր:



Գիշեր մը, երբ իր պարտականութիւնները կատարած էր, Սամուէլ կը պատրաստուէր քնանալու: Ինք եւ Զեղի քնացած էին: Սակայն Սամուէլ տակաւին լրիւ քունի չէր անցած, ծայր մը լսուեցաւ, որ կ'ըսէր. «Սամուէլ, Սամուէլ...»:



Սամուէլ ելաւ իր անկողինէն: Ան վազելով գնաց
 Զեղիի անկողինին քով: Ան ըսաւ. «Ահաւասիկ
 իոս եմ: Դուն զիս կանչեցիր»:

«Ես քեզ չկանչեցի», ըսաւ Զեղի: «Շատ յոգնած
 եմ, Սամուէլ, գնա՛ քնացի՛ր»: Ուստի, Սամուէլ
 վերադարձաւ իր անկողինը: Զազիւ աչքերը կը
 փակուէին, դարձեալ լսեց նոյն ձայնը. «Սամուէ՛լ,
 Սամուէ՛լ»:



Սամուէլ դարձեալ վազեց Զեղիի քով: Սակայն Զեղին
 կրկին զինք անկողին դրկեց: Սամուէլ դարձեալ իր
 անկողինը գնաց, եւ վերմակով ծածկուեցաւ: Ճիշդ այդ
 վայրկեանին, ձայնը դարձեալ լսուեցաւ. «Սամուէ՛լ,
 Սամուէ՛լ» լսեց ան: «Զեղի, ահա կու գամ», ըսաւ Սամուէլ:
 Գնաց եւ արթնցուց Զեղին: Այն ատեն Զեղին ըսաւ. «Ես չեմ
 քեզ կանչողը: Կրնայ Աստուծոյ ձայնը ըլլալ այդ: Ուստի,
 երբ դարձեալ լսես նոյն ձայնը, ըսէ. “Խօսէ՛ Տէր, քու
 ծառադ մտիկ կ’ընէ”»:




Անգամ մը եւս փաթթուեցաւ վերմակին: Դարձեալ
 լսուեցաւ ձայնը. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»: Այն ատեն
 Սամուէլ ըսաւ. «Խօսէ՛ Տէր, քու ծառադ մտիկ կ’ընէ»:
 Աստուած Սամուէլին շատ մը բաներ ըսաւ: Սամուէլ
 ուշադրութեամբ մտիկ ըրաւ: Ան իմաստութեամբ
 աճեցաւ, եւ մեծ ղեկավար մը դարձաւ: Ան մտիկ ըրաւ
 Աստուծոյ ըսածները:



Լուծե՛լ այս խճանկարը

Լաւ մտիկ ըրէ, երբ ուսուցիչդ կը կարդայ իւրաքանչիւր բաժինը: Մեր պատմութեան մէջ գտնուող այս բառերուն նայէ: Գտի՛ր պահանջուած տառը իւրաքանչիւր բառին մէջ եւ շրջանակի մէջ առ: Ապա նոյն շարքով շարէ զանոնք վարի տուփերուն մէջ:

1. Վերջին տառը **Սամուէլ** բառին մէջ
2. Առաջին տառը **Սամուէլ** բառին մէջ
3. Զինգերորդ տառը **Կանթեղ** բառին մէջ
4. Վերջին տառը **Արթննալ** բառին մէջ



Մեր ծնողներուն խօսքը մտիկ ընելով, մեր սէրը արտայայտած կ'ըլլանք անոնց նկատմամբ:

Զեղիի նման, մեր ծնողներն ալ մեզի կը սորվեցնեն Աստուծոյ խօսքը:

Մենք Աստուծոյ Խօսքը կը լսենք եկեղեցւոյ մէջ

Սուրբ Պատարագի սկզբնաւորութեան, Աստուծոյ Խօսքը կը լսենք: Սարկաւազը կը կարդայ Աւետարանը: Աւետարանի ընթերցման ժամանակ մեր կեցուածքով, մեր սէրը ցոյց կու տանք Աստուծոյ նկատմամբ: Ուշադրութեամբ եւ երկիւղածութեամբ կը հետեւինք ընթերցումին:

Երբ եկեղեցի երթաս, ուշադրութեամբ հետեւիր Սարկաւագին, Աւետարան կարդացած ժամանակ: Տես թէ այս բառերէն մէկը կամ միւսը պիտի լսե՞ս.



**Ալելուիա Օրթի
Պռօսփումէ**

որ կը նշանակէ
որ կը նշանակէ

**Ալելուիա, ոտքի՛ ելէք
Ուշադիր եղէք**

Աւետարանի ընթերցումէն ետք բոլորս միասին կ'երգենք. «Փառք քեզ Տէր, Աստուած մեր»:

Շրջանակի մէջ առ այն նկարը, որ ցոյց կու տայ թէ ինչպէ՞ս պէտք է ըլլանք եկեղեցւոյ մէջ, Աւետարանը կարդացուած պահուն:



Հոգեւոր բառարան
ԱԼԵԼՈՒԻԱ
Փառք Աստուծոյ

Այս դասին մեջ գաւակդ սորվեցաւ, թէ մեր լսելու կարողութիւնը Աստուծոյ տրուած պարգեւ մըն է մեզի, եւ թէ մենք զայն լաւ նպատակներու պէտք է օգտագործենք: Աստուածաշնչական դրուագը, հիմնուած **Ա. Սամուէլ 1.21-28, 2.18-21** եւ **3-րդ գլխուն վրայ**, իրենց ներկայացուց փոքրիկ տղու մը պատմութիւնը, որուն ծնողները Տաճարին ծառայութեան ընծայեցին զինք Սելուվմի մէջ: Սամուէլ այնտեղ սորվեցաւ հնագանդ ըլլալ **Յեղի քահանային՝ ա-**նոր ըսածները մտիկ ընելով եւ գործադրելով այն ինչ որ կ'ըսէր ան: Սամուէլ երբ մեծցաւ եւ լաւ խօսք մտիկ ընող եղաւ, **Յեղիի օգնութեամբ սորվեցաւ ուշադիր ըլլալ այն ծայնին որ զինք կը կանչէր:** Գիտնալով որ Աստուած է Սամուէլը կանչողը, **Յեղի սորվեցուց անոր թէ ինչպէ՞ս պէտք է պատասխանէ այդ ծայնին:** Այնուհետեւ, Սամուէլ սորվեցաւ ուշադիր ըլլալ Աստուծոյ ծայնին որ սիրտին մէջ կը լսուէր, եւ լաւ ղեկավար մը դարձաւ իր ժողովուրդին կեանքին մէջ:

Լսելու կարողութիւնը յատկապէս մանկական այս տարիքին մէջ զարգացնելը շատ կարեւոր է: Անոնց կարճ ուշադրութիւնը հետզհետէ կը զարգանայ ու կ'աճի: Մանուկները երբ սկսին լսել ինչ որ կարեւոր է տուեալ պահուան մը մէջ, շուտով պէտք է գնահատենք զանոնք, զարգացնելու համար ընտրողաբար լսելու իրենց ունակութիւնը: Այդ կարողութիւնը արթնութիւն կը կոչենք: Այս կարողութիւնը կ'օգնէ մանուկին որ սկսի սորվիլ: **Յեղին շատ կարեւոր դեր խաղաց Սամուէլին սորվեցնելով ուշադիր ըլլալ այն ծայնին որ լսուած էր անոր, որովհետեւ անկարեւոր չնկատեց Սամուէլին յաճախակի իր քով գալը եւ զինք արթնցնելը:** **Յեղին մտիկ ըրաւ իր սրտի ծայնին, եւ լսեց Աստուծոյ տուած մղումը իրեն, որպէսզի սորվեցնէ Սամուէլին մտիկ ընել Աստուծոյ ծայնին:** Իբրեւ ծնողներ եւ ուսուցիչներ, մենք եւս կոչուած ենք մանուկներուն մէջ զարգացնել լսելու կարողութիւնը: Երբ անոնք աճին այս կարողութեան մէջ, պիտի սկսին նաեւ լսել Աստուծոյ ծայնը: Բոլոր մանուկներն ալ Սամուէլի ունեցած փորձառութիւնը պիտի չունենան հարկաւ: Սակայն, ինչպէս որ Տէրը մեզի կը սորվեցնէ, ուշադիր կերպով ծնողներուն ըսածը մտիկ ընելը առաջին քայլն է Աստուծոյ ծայնը լսելուն: Ծնողներուն եւ ուսուցիչներուն խօսքը մտիկ ընելը եւ եկեղեցւոյ մէջ թէ տան մէջ Աստուծոյ խօսքը լսելը, ամբողջ կեանքի ընթացքին Աստուծոյ ծայնը մեր սրտին մէջ ունենալու երաշխիք է եւ հոգեւոր կեանքի մը սկիզբը: Ահաւասիկ կարգ մը ուղղութիւններ, որոնց միջոցաւ ձեր գաւակին լսելու կարողութիւնը կրնաք զարգացնել:

1. Զաւակիդ հետ միասին կարդա՛ **Ա. Սամուէլ 3.1-11:** Եթէ գաւակդ իր հետ բերած է դասագիրքը, ըսէ՛ որ կարդայ անկէ, եւ դուն ուշադրութեամբ լսէ զինք: Կամ ըսէ՛ որ դպրոցին մէջ լսած իր պատմութիւնը վերստին պատմէ քեզի իր բառերով:
2. Իրարու հետ խօսեցէք, թէ ինչպէս զիրար կը լսէք: Միշտ ուշադրութեամբ մտիկ կ'ընէ՞ք իրարու: Մարդիկ շուտով կը պատասխանեն՝ ձեզի երբ զիրենք կանչէք, թէ այլ գործերով զբաղած կ'ըլլան: Ուրիշին ըսածը լաւապէս մտիկ ընելու ցանկ մը կազմեցէք, ինչպէս նաեւ նշեցէք այն բոլոր կերպերը, որոնք պէտք է մերժուին՝ (ծնողքին կամ ուսուցչին ըսածները արհամարհել, բամբասանք մտիկ ընել, եւայլն): Զեզմէ իւրաքանչիւրը թող ընտրէ ուրիշին ըսածը մտիկ ընելու կերպ մը, զոր յաճախ կը կիրարկէ, եւ իւրաքանչիւրը թող մատնանշէ իր մէջ զարգացնելիք կերպ մը ուրիշը լսելու ճիգին մէջ: Յառաջիկայ օրերուն եւ շաբաթներուն ստուգում մը կատարեցէք, թէ ձեզմէ ո՞վ աւելի զարգացուց իր նոր սովորութիւնը:
3. Սովորութիւն դարձուցէք ընտանեօք Աստուածաշունչէն գէթ զլուիս մը կարդալ օրական դրութեամբ: Այնպիսի պահ մը ընտրեցէք, որ սովորաբար ընտանիքը արդէն կը հաւաքուի, եւ ատիկա առիթի վերածեցէք Աստուծոյ խօսքը լսելու: Զեր գաւակին յիշեցուցէք, որ եկեղեցւոյ մէջ Աւետարանը կարդացուելէ առաջ, սարկաւագը ներկաներէն կը պահանջէ ուշադրութեամբ եւ երկիւղածութեամբ մտիկ ընել: Մղեցէք զիրենք, որ նոյն յարգանքը ունենան նաեւ տան մէջ Աստուածաշունչը կարդացուած ժամանակ:
4. Զաւակիդ սորվեցուր **Առակներու Գիրքին** այս համարը, եւ միասնաբար ձեր աղօթքին մէջ յիշեցէք զայն:

«Լսէ՛ որդիս քու հօրդ խրատը, եւ մի՛ արհամարհեր մօրդ դաստիարակութիւնը»:

(Առակներ 4.8)

ԱՍՏՈՒԱԾ Կ՝ՕԳՆԷ ԻՆԾԻ, ՈՐՊԷՍՁԻ ՄԵԾՆԱՄ

Յիսուս մեծցաւ, զօրացաւ եւ իմաստութեամբ լեցունցաւ:
Ըստ Դուկասի 2.40

Գրելով...

Երբ ես տարեկան էի

1



Քալէլ
սորվեցայ

2



Խօսիլ
սորվեցայ

3



Գոյները
սորվեցայ

4



Իմ հասակս 90 սմ է

5

Իմ անունս գրել սորվեցայ

Հիմա դու 6 տարեկան ես:
Գծե՛ք բան մը որ նոր սորվեցար:

Յիսուս մանուկն ալ ճիշդ քեզի պէս մեծցաւ: Ինչպէս որ դու 6 տարեկան ես, նոր սորվեցար, ինչ ալ նոր սորվեցաւ: Հիմա մտիկ ըրէ՛ք թէ ի՞նչ պիտի պատմէք քեզի ուսուցիչդ Յիսուսի մեծնալուն մասին:

ԱՄՏՈՒԱԾԱԾՈՒՆՔԷՆ

ՅԻՍՈՒ ԿՐ ՄԵԾՆԱՅ

Ըստ ՄԱՏԹԵՈՍ 2.13-23 եւ ԴՈՒԿԱՍ 2.39-40

Պատմութեան կարգ մը բառերը հակառակ կողմէն գրուած են: Ճիշդը գրէ՝ բառին ճիշդ քովը բաց ձգուած տեղը: Ապա, ուսուցիչին հետ միասին կարդա՛ պատմութիւնը:

թրագան այն տեղն է, ուր Յիսուս իր ծնողներուն՝ Յովսէփի եւ Մարիամի հետ ապրեցաւ: Յիսուս մեծցաւ եւ շատ մը բաներ սորվեցաւ: Ան հիմա կրնայ առանձին հագուիլ հագուստները եւ

ըրենկիշօկ : Ան շատ լաւ օգնական մըն էր իր

ծրոգածղատա հօրը՝ Յովսէփին:

Ան իր ընկերներուն հետ գնդակ խաղաց եւ սորվեցաւ իր խաղալիքները

լատ մաքու ընկերներուն:



Մարիամ անոր սորվեցուց աղօթել: Յիսուս շատ կը սիրէր **լեթօղա** իր ընտանիքին հետ, ճաշի ժամանակ: Շաբաթ օրուան ճաշը յատուկ էր, երբ Մարիամ երկու **րեմոմ** կը վառէր: Գերմակ կտաւին տակ դրուած հացը, Յիսուս շատ կը սիրէր: Յովսէփ, Մարիամ եւ Յիսուս ամեն Շաբաթ օր աղօթարան կ'երթային Աստուծոյ աղօթելու: Յիսուս կարդալ սորվեցաւ, եւ օր մը աղօթարանին մէջ **ըջրի՞ճ բրուս** կարդաց:

Հոգեւոր բառարան

ՆԱԶԱՐԷԹ

Այն քաղաքը,
ուր Յիսուս մեծցաւ



ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Մանուկները երբ ծնին կարճ մազ կ'ունենան: Երբ մեծնան, իրենց մազն ալ կ'երկննայ: Մազը կրնայ գանգուռ ըլլալ կամ շիտակ, սեւ, սրճագոյն կամ դեղին գոյնով: Մեր գլխուն մազերը մեզ կը գեղեցկացնեն: Ծնողները շատ ուրախ կ'ըլլան, տեսնելով իրենց զաւակներուն մեծնալը: Անոնք Աստուծոյ կ'ուզեն շնորհակալութիւն յայտնել, ճիշդ ինչպէս Մարիամ եւ Յովսէփ մանուկ Յիսուսը Տաճար տարին:

Հոս կը տեսնէք Մարինային ծնողները: Անոնք Մարինան եկեղեցի բերած են, որպէսզի շնորհակալութիւն յայտնեն Աստուծոյ, այսպիսի աղջիկ մը տուած ըլլալուն համար: Անոնք կը խնդրեն քահանայէն, որ օրհնէ զայն, նախքան առաջին անգամ ըլլալով անոր մազերը կտրուիլը: Մարինան խորանին կը մօտենայ: Քահանան օրհնելէ ետք զինք, քանի մը թել կը կտրէ անոր մազերէն: Ծնողները այդ փոքրիկ փունջը կը պահեն, որպէս յիշատակ Մարինայի մազերուն առաջին անգամ կտրուելուն:



Հիմա պիտի կարդաք այն աղօթքը, որ երեխաներու առաջին անգամ մազը կտրելու ատեն կը կարդացուի: Անունդ գրէ՝ բաց ձգուած տեղը: Ապա, նկարին մէջի մանուկին դէմքին տեղ դէմք մը գծէ՝ որ քեզի նմանի:

Կ'աղաչենք Քեզի, Տէր մեր եւ Փրկիչ, ինչպէս որ օրհնեցիր Դաւիթը, Սամուէլը ղրկելով, որ իր ձեռքը դնէ անոր վրայ, այս
անունով մանուկն ալ օրհնէ, եւ Սուրբ Հոգիդ տուր անոր, որպէսզի Քու շնորհքիդ մէջ մեծնայ, վայելելով Քու տուած բոլոր բարիքներդ:

Քաջ Վարդան սուրբ գորավարը կարդալ կը սորվի

Քաջ Վարդան Սամիկոնեան քեզի նման փոքրիկ երեխայ էր: Անոր մայրը՝ Սահականոյշ, եւ անոր հայրը՝ Համազասպ, շատ հպարտ էին իրնով: Անոնք Վարդանին սորվեցուցին հայերէն նոր այբուբենը, եւ օգնեցին որ Աստուածաշունչը կարդայ:

Վարդանին ամենէն շատ սիրած ուսուցիչը իր մեծ հայրն էր, իր մօրը հայրը՝ Սահակ Կաթողիկոս: Անոնք երբ միասին ըլլային, մեծ հայրը Աստուածաշունչը կարդալ կը սորվեցնէր անոր: Հոս կայ նախադասութիւն մը, որ Քաջ Վարդան կարդացած է իր մեծ հօր հետ: -

Ներկէ՛ ճերմակ ծգուած տառերը,
նայելով վարը դրուած գոյներու
հրահանգին:



Աստուած

Ս

Է

Ր

Է

Ս = կարմիր

Է = կանաչ

Ր = դեղին

ՏԱՆՄԷՔ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասին մեջ ձեր գաւակը տրվեցաւ թէ Յիսուս ալ իրենց պէս մանուկ էր եւ սկսաւ մեծնալ։ Մարդուն աճը միայն ֆիզիքական չէ, այլ նաեւ իմացական, զգացական եւ հոգեկան։ Անտարաբաններուն մէջ Յիսուսի աճման այս ընթացքը թէւս ամբողջովին չէ նկարագրուած, սակայն **Դուկասի Անտարանին մէջ (2.40)** ըստած «կ'աճէր» բառը ցոյց կու տայ, թէ Ան եւս այս ընթացքէն անցաւ, ինչպէս իւրաքանչիւր ներեխայ իր աճման ընթացքին կ'ունենայ։ Ասիկա գիտնալով, ձեր գաւակը շատ ուրախ պիտի ըլլայ, եւ աւելի եւս շնորհակալութիւն պիտի յայտնէ Աստուծոյ, որ իրեն կեանք պարգեւած է։

Նազադէթի մէջ, Յիսուսի մանկութեան պատմութենէն անոնք տրվեցան թէ Յիսուսի ծնողքը՝ Մարիամ եւ Յովսէփ ամուսնացուցին որ միշտ իրենց խօսքը մտիկ պէտք է ընէ պատանութեան տարիներուն։ Փոքրիկն Քաջ Վարդանի պատմութեան մէջ նոյն մտածումը դարձեալ կրկնուած է։ Ամուր մայրը՝ Սահականոյշ, հայրը՝ Համագասպ եւ մեծ հայրը՝ Սահակ Կաթողիկոս Աստուծոյ սէրը տրվեցուցին իրեն, Աստուածաշունչ կարողալ սորվեցնելով նախ, եւ Աստուծոյ պատուիրաններուն համաձայն ապրիլ թելադրելով ամուր։ Ջաւակը մեծցուցած աստեղ ամուր տրվեցուր կանուխ տարիքէն Աստուածաշունչը կարողալ։ Շատ փոքր եղած ժամանակ, դուն իր հետը կարողալ եւ բառերը բացատրել, որպէսզի հասկնայ։

Ջաւակիդ հետ միասին իր կեանքին ժամանակագրութիւնը պատրաստել, կարեւորագոյն թուականները գրի առնելով, երբ սկսաւ բան մը տրվիլ իր կեանքին մէջ։ 15 տ. լայնքով երկար թուղթ մը գործածել այս նպատակին համար, սկսելով այստեղ դրուած թուականներու ամբողջացումէն։ *Ծնունդը, խօսած առաջին բառը, առաջին մէջ առաջին օրը, մկրտութիւնը, առաջին անգամ մագ կտրելը, եւն.:*

Ժամանակագրութիւն գաւակիդ կեանքին կարեւոր դէպքերուն

Օգնէ որ գաւակը կարենայ ամբողջացնել, գրելով թէ ե՞րբ պատահեցան այստեղ նշուածները։ Եթէ ճիշդ թուականը չէք գիտեր, մօտաւոր բան մը գրեցէք դէպքին մասին։ Ջաւակը կրնայ իւրաքանչիւրին կողքին նկար մը գծել, որ դէպքը խորհրդանշէ։

(Երեխային անունը)

տարեդարձ	մկրտութիւն	առաջին բառը	առաջին քայլը	առաջին մագ կտրելը	առաջին օրը դպրոցին մէջ
----------	------------	-------------	--------------	-------------------	------------------------

Աստուծոյ գործերը հիանալի են:

Ծովեր, լիճներ եւ լեռներ, հսկայ կէտ ձուկեր եւ փիղեր,
մարախներ ու միջատներ, փոթորիկներ որոնք անձրեւ կը
բերեն, պտուղներ որոնք դաշտերուն մէջ եւ ծառերուն
վրայ կ'աճին, եւ այս բոլորը մենք
կրնանք վայելել...:





Սիրելի՛ ծնողներ

Այս մասը մանուկներուն պատմութիւն լսելու սերը կը գոհացնէ: Հին եւ Նոր Կտակարանէն քաղուած յատուկ պատմութիւններով, աշակերտներուն ուշադրութիւնը պիտի հրաւիրուի ստեղագործութեան սքանչելիքներուն վրայ: Նոյեան տապանին պատմութիւնը առիթ մը կը ստեղծէ սիրելու Աստուծոյ ստեղծած բոլոր կենդանիները, միւս կողմէ մաքու կը ներկայացնէ Զրիեղեղի ցաւալի պատահարը: Կէտ ծուկին փորին մէջ մնացած Յովնանին պատմութիւնը ուշադրութիւնը կը կեդրոնացնէ Աստուծոյ ստեղծածներէն մէկուն վրայ միայն: Նոր Կտակարանէն քաղուած երկու պատմութիւններ կ'օգնեն մանուկներուն կլիմայական եղանակները ճանչնալու եւ կերակուրին բարիքը՝ զոր Աստուած պարգեւած է մեզի: